600.0122.25.05.16

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ ՈՐՈՇՈՒՄ

25 մայիսի 2016 թվականի №122Ն
ք.Երևան

ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԿԱՊՈՒՂԻՆԵՐԻ ԵՎ ՏՎՅԱԼՆԵՐԻ ՀՈՍՔԵՐԻ ԱՇԽԱՐՀԱԳՐԱԿԱՆ ԵՐԹՈՒՂԻՆԵՐԻ ՀԱՄԱՁԱՅՆԵՑՄԱՆ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Էլեկտրոնային հաղորդակցության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 5-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի «իէ» ենթակետը՝ Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովը **որոշում է.**

1. Սահմանել, որ հանրային էլեկտրոնային հաղորդակցության ցանցերի օպերատորները.
   1) Հայաստանի Հանրապետության տարածքում հանրային էլեկտրոնային հաղորդակցության ծառայություններ մատուցելու նպատակով Հայաստանի Հանրապետության սահմանը հատող միջազգային կապուղիների կամ տվյալների հոսքերի վարձակալման կամ ձեռքբերման դեպքում, այդ կապուղիների կամ հոսքերի Հայաստանի Հանրապետության սահմաններից դուրս աշխարհագրական երթուղիների վերաբերյալ համաձայնությունները (այդ թվում՝ պայմանագրեր, համաձայնագրեր) նախապես համաձայնեցնում են Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի հետ.
   2) ապահովում են սույն որոշման 1-ին կետի 1-ին ենթակետի համաձայն Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի հետ նախապես համաձայնեցված երթուղու կազմակերպումը.

3) մինչև սույն որոշումն ուժի մեջ մտնելու պահը գործող կապուղիների կամ հոսքերի Հայաստանի Հանրապետության սահմաններից դուրս աշխարհագրական երթուղիների վերաբերյալ սույն որոշման 1-ին կետի 1-ին ենթակետում նշված համաձայնությունները սույն որոշումն ուժի մեջ մտնելուց հետո 10-օրյա ժամկետում ներկայացնում են Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողով:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ
ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ՝ Ռ. ՆԱԶԱՐՅԱՆ

ք.Երևան
25 մայիսի 2016թ.